

մէջ¹ (1629, Նոյեմբեր) : Այսպէս վերջ առին էջմիածնի Աթոռին շուրջը երկար տարիներու վէճերն ու խնդիրները : Ինչպէս Տարածման Հաւատոյ Ս. Ժողովն իւր Գործերուն մէջ կը գրէ՝ երկու կաթողիկոսներու մէջ ծագած այս վէճը նաեւ Սրբազան Քահանայապետին առջեւ ելած է, երկու կողմերը ուզած են Ուրբանոս Ը. իրաւարար ընտրել. տես այս մասին § 34 : Մովսէս միապետեց Աթոռը² :

¹ Թէպէտ Աւարել Դաւրիժեցի (էջ 246) անոնց աղափութիւնը մահէն Ամթայ իշխաններու միջամտութեան կը վերագրէ, բայց ժամանակակիցները դիտեն թէ ուրացմամբ միայն կրցան ազատիլ : Պօղոս վարդապետ յետոյ անցաւ Լեհաստան եւ հոն վախճանեցաւ. իսկ Սահակ կաթողիկոս վերադարձաւ էջմիածին եւ հոն կնքեց իր մահկանացուն (Դաւր. 240—248. Օրմանեան, Բ., § 1655—1656) : Գաղատիոյ Թ. 54, Թղ. 158 ա եւ յջ. ուր կան զանազան քաղաքացիներ հին նամակներէ, ի մէջ այլոց յառաջ կը բերուի հատուած մը այսպէս. «Եւ թէ զի՞նչ է այս ուրացութիւնն Սահակայ եւ Պօղոսի եւ զորպիսութիւնն, կարծեմ թէ լուեալ ես, վասն որոյ ոչ դրեմք, այլ զայս միայն ասեմք թէ ուրացութիւն նոցա սուգ է մեզ վասն հաւատոց պակասութեանն : Այլ թէ զի՞նչ չարիք գործելոց էր կամ լինելոց էր ի ձեռն նոցա՝ խափանեալ եղեւ ուրացութեամբ նոցա. վասն որոյ ուրախութիւն եղեւ ոչ սակաւ, զի նոցա կամքն այն էր, որ զչոռմանց երկրի քրիստոնեայքն կտրէին էջմիածնայ. եւ Սահակ նստէր կաթողիկոս ի Բիւղանդիոյ եւ մեռն աւրհնէր. եւ յաղագս այսր բանի հրովարտակ հանեալ արքունուստ երբեր յԱմիթ Պաւղոսն այն» ըստ յառաջբերութեան Համամճեանի իր անտիպ ցուցակին մէջ : — Խորով փաշայ Ամիթ կը գտնուէր 1629 Նոյեմբերին, կ'արչաւէր Բաղդասար վրայ. Hammer, III, 82 :

² Դաւիթ կաթողիկոս, որ 1625ին հրաժարած էր աթոռէն եւ քաշուած Պարսկաստան, վախճանեցաւ 1634ին իբր 90ամեայ «որ ի մէջ ապաշխարանաց մեռաւ», Դարանաղցի, էջ 284 :